«Կարեն Մեծ» ՍՊԸ գրավատան վարկավորման ընդհանուր պայմանների փոփոխություններին համաձայնություն տալու մասին

2022-08-09

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ

Որոշում թիվ 1/404 Ա

09.08.2022

«Կարեն Մեծ» ՍՊԸ գրավատան վարկավորման ընդհանուր պայմանների փոփոխություններին համաձայնություն տալու մասին

Ուսումնասիրելով «Կարեն Մեծ» ՍՊԸ (այսուհետև՝ նաև գրավատուն) կողմից 2022 թվականի օգոստոսի 1-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացված՝ գրավատան կողմից իրականացվող վարկավորման ընդհանուր պայմաններում առաջարկվող փոփոխությունները և հիմք ընդունելով §Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին¦ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, 18-րդ հոդվածի 4-րդ մասի §է¹¦ կետը, §Գրավատների և գրավատնային գործունեության մասին¦ Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասը՝
Ո ր ո շ ու մ ե մ.

1. Համաձայնություն տալ «Կարեն Մեծ» ՍՊԸ (լիցենզիա՝ ԳԳ-Ե 218) գրավատան կողմից 2022 թվականի օգոստոսի 1-ին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացված վարկավորման ընդհանուր պայմանների փոփոխություններին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հայաստանի Հանրապետության

կենտրոնական բանկի նախագահի տեղակալ՝
Ներսես Երիցյան